Նրան Մայր Աթոռից սառեցնել և ձգտելու հոգևոր Բարձրագոյն Իշխանութեան ուժը ջլատել։ Ահա այսպիսիք մի անխիղճ թղթակցի միջնորդութեամբ, որ պատկանում է անշուշտ շահախնդիրների և անձնական հաշիւների անձնատուր մի կուսակցութեան, հանդէս են բերում իբրև հմուտ, կորովի, պարտաճանաչ, համակրելի, հասարակաց համակրանքը գրաւող անձինք։ Ցաւալի է, որ այդպիսի մի փոքրիկ խումբ, գլուխ ունենալով իւր պարտքը չճանաչող և լոկ անձնականութիւնից ղեկավարող մի եկեղեցականի կամ աշխարհականի ձգնում է ոչ միայն մոլորեցնել միամիտ և բարեմիտ, բայց գործերին անտեղեակ բազմութիւնն, այլ և գայթակղել հեռաւոր հասարակութիւնը գործիք դարձնելով իւր մասնաւոր նպատակին հասարակաց շահին ծառայելու ուխտած մամուլն էլ։ Ցարակոյս չկայ, որ այդպիսի շահամոլ և իրանց անձնականութիւնը միայն պաշտող անձինք պիտի ձգնեն իրանց յանցանքն ուրիշների վերայ բարդել և չեն զլանալու անձնական շահապաշտութեամբ մինչև իսկ Վասակի պաշտօն վարելու այն ոյժն ջլատելու համար, որ, պարտաճանաչ գոլով, հասարակաց իսկական շահերը պաշտպանելու և այդպիսի ուխտադրուժ և աղգի ու եկեղեցու շահերին վնասակար ուղղութեան արբանեակներին ուժաթափ անելու սուրբ պարտականութիւնն ունի։

ԼՈՒՐԵՐ

Նորին Օծութիւն Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց օրհնութեան և շնորհաւորութեան կոնդակ առաքելով Կ. Պոլսոյ նորընտիր Խարէն Աշըգեան Սրբազան Պատրիարքին, շնորհեց Նրան և Արքեպիսկոպոսութեան պատիւ։

—

Նորին Վեհափառութեան Բաքու լինելու ժամանակ Շուշեցի պ. Սիմէօն Այդինեանցը շնորհաւորելով Նորա գալուստը՝ նուիրում է Նորին Օծութեան 12 արծաթեայ և 8 պղնձեայ հին դրամներ, որոնք յանձնուեցան Ս. Աթոռի թանգարանին։ Իսկ պ. Գէորգ Միրզաբէգեանը նուիրում է մի մեծ հին դաշոյն, որ նոյնպէս դրուեցաւ թանգարանում։

—

Նորին Օծութիւն Վեհափառ Հայրապետն իւր ճանապարհորդութիւնից վերադառնալով Ս. Աթոռը յանձնեց Ս. Սինոդին 10,500 ռուբլի 90 կոպ. որոնք հաւաքուել էին զանազան տեղերից և բարեպաշտ անձանց նուէրներից։ Սոցա անուանական ցուցակն ապագայում կհրատարակուի։

—

Նորին Օծութեան Ճանապարհորդութեան նկարագիրը մանամբ Քաղուած է Արձագանքի Բագուի թղթակցութիւնից և հեռագիրներից։

—

Մայիս, Յունիս, Յուլիս և Օգոստոս ամիսների Արարատներում հրատարակած յօդուածների հեղինակներին հասանելի վարձատրութիւնք վճարուեցան։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՆՔ.

Շուշեցի Բարեպաշտուհի տիկին Թագուհի Հախումեանց իւր հանգուցեալ առն Պետրոսի Հախումեանց բանաւոր կտակի համաձայն նուիրել է մի հարիւր ռուբլի ի նպաստ շինութեան Մայր Տաճարի Ս. Էջմիածնի.

Աստուած ի հաճոյս իւր ընկալցի և լուսաւորեսցէ զհոգի հանգուցելոյն ամէն։

—

Կարդալով «Արարատ» ամսագրում և այլ լրագրերի մէջ մեր Միածնաէջ Սուրբ Տաճարի վերաշինութեան լուրը և այդ մասին եղած նուիրատու. անձանց անուանացուցակը «Արարատի» մէջ, ես էլ ոչ իբրև այն մշտական «ազգի բարերարները», որոնք միշտ իրանց առատ վաստակից լիաբուռն բաժին են հանում ոչ միայն Մայր Աթոռոյս այլ և մեր ուրիշ շատ բարեգործական հրմնարկութիւններին, և ոչ իբրև այն պատահական հարուստները, որոնք իրանց հարիւրները և հազարները նուիրելով լոկ իրանց հարստութեան գոյութիւնն են ուզում ցոյց տալ աշխարհին, այլ իբրև իմ մօրս հարազատ և երախտամատոյց որդի, մի գիւղական չքաւոր քահանայ ուզեցի լոկ իմ զգացուած սրտի ուրախական թելադրութիւնը կատարած լինել, այդ ամենասուրբ և նուիրական գործին օժանդակող անձանց հազարին՝ իմ կոպէկներս ևս խառնել։

Ընդունեցէք ուրեմն, ծերունի ճակատիս արևահոս քրտանց պտուղը, մի տասը ռուբլի (10ռ.) ։ իբրև այն այրի կնոջ լումանը որ այն քան ուրախութեամբ ընդունեց մեր ամենի Փրկիչ Յիսուս Քրիստոս։

Շատ համարեցէք և այս չափը Բէկլարքեանդու նման մի ամենայետին գիւղի քահանայից, որ թէև աղքատ, բայց